

մեղս, այլ թողցէ դյանցանս նոցա: Գիտեմ, լըւեալ էք ի տեղացէս զմեզ սուրբուն անելն եւ մեր առ թաղաւոր զնալն եւ դարձն մեր. եւ յառաջ քան Հալապու խաղաղութեանն մեր՝ աստ ընդ Եղիազարին բարեկամացն աբարաք խաղաղութիւն եւ դանուէն ի պատարազն յիշեցաք, թուղթ դրեցաք Եղիազար Հոգեւոր Տիրին ըստ մեր արժանոյն եւ զանդրադարձն եկն առ մեզ, եւ ոչ էր ըստ իւրում իմաստութեանն պատշաճի: Կրկին Սիւնհոգոս արարաք ի քաղաքս մեծամեծացըն, ի յիմ կողմանէ Ստեփաննոս Վրդպտն սահմանեցի եւ դօլուաթաւորացէն եւս խընդրեցի քահանայ եւ դօլվաթաւոր մի զի ընդ վրդպտին դայցեն հրաւիրակ: Դօլուաթաւորքն այսօր եւ վաղն ձգելով մինչ Խ. օրն չեղեւ, զի միմեանց խօսիցն լսող չեղան եւ յետոյ դօլվաթաւոր մի Վարդան անուն ընդ վարդապետին իմ կողմանէ առաքեցի Հանդերձ սիրոյ նամակաւ:

Դարձեալ, սիրելի որդի՛ք, դրեալ էիք՝ հրամայես զալ առ մեզ, եւ թէ զմեզ անարժան Համարես եւ սուրբ աթոռն կամիս զնալ մեք զամք ի Կարնոյ քաղաքն: Սիրելի որդի՛ք, թէ ո՞րչափ եմ ձեր տեսութեանն փափազ, զայն ծածկազիտին է յայտ, իսկ յաղապս սիրոյ եւ խաղաղութեան, ոչ եթէ ոտիւք՝ այլ երեսիս վերայ եմ գալոյ, վասն զի այն է հրաման Քրիստոսի Ա՛յ մերոյ: Բայց, սիրելի՛ք, ուստի որ վնասն ծնանի, ա՛նդ պարտ է սպեղանի կաղմել. այսքան ժամանակ է ի յայդ օրհնեալ քաղաքէդ երկու